ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

Ք. Երևան 19.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/159

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Տրակ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Տրակ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Դ. Մխիթարյանի, ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ավտոբեռնիչների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 26.09.2019թ.-ի թիվ 26/26-1/15856-2019 գրությամբ «Տրակ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 16.09.2019թ. թիվ ՊՆ/02/1861-2019 գրության հիման վրա, 26.09.2019թ.-ին «Տրակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 26.09.2019թ.-ին:

Բողոքներ քննող անձի 26.09.2019թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2019/159 համարի ծածկագիրը:

02.10.2019թ.-ին, 08.10.2019թ.-ին, 16.10.2019թ.-ին, 25.10.2019թ.-ին, 12.02.2021թ.-ին և 19.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

25.10.2019թ.-ին, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի «Տրակ» ՍՊԸ-ի հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին 24.10.2019թ.-ին կայացված որոշումը, որով հայցի ապահովման նպատակով արգելվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանին՝ ՍՑ-ԼՕ-2019/159 ընթացակարգով կատարել որևէ գործողություն՝ ուղղված հայցվորին՝ «Տրակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն՝ մինչև ԵԴ/33672/02/19 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.09.2019թ.-ի թիվ 26/26-1/15856-2019 գրությամբ «Տրակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2019/159 ընթացակարգի քննությունը կասեցնել մինչև ԵԴ/33672/02/19 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

04.02.2021թ.-ին, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ/33672/02/19 քաղաքացիական գործով՝ ըստ հայցի «Տրակ» ՍՊԸ-ի /ՀՎՀՀ 00171178, գրանցման համար 264.110.975797/ ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, երրորդ անձ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի՝ մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու պահանջի վերաբերյալ 07.07.2020թ.-ին կայացված հայցը մերժելու և 24.10.2019թ.-ի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին վճիռը, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.09.2019թ.-ի թիվ 26/26-1/15856-2019 գրությամբ «Տրակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2019/159 ընթացակարգի քննությունը վերսկսել և Ընթացակարգի քննությունն իրականացնելու համար հրավիրել նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 12.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 19.02.2021թ.-ին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 16.09.2019թ. թիվ ՊՆ/02/1861-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում «ՏՐԱԿ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին համակարգի (armeps.am) միջոցով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, սակայն ներկայացված փաստաթղթերում առկա էր անհամապատասխանություն:

Հանձնաժողովը «ՏՐԱԿ» ՍՊԸ-ին ծանուցել է երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, սակայն մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկել անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովի կողմից «ՏՐԱԿ» ՍՊԸ-ի հայտը մերժվեց:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Տրակ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Տրակ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 27.09.2019թ.-ին գրությամբ դիմել է «Տրակ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.09.2019թ.-ի թիվ 26/26-1/15856-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում՝ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

««ՏՐԱԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/159 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

ՀՀ պաշտպանության նախարարության /այսուհեաև նաև՝ Պաավիրատու/ կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/, որին 21.08.2019թ. մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՏՐԱԿ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.08.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ 27.08.2019թ.՝ հայտերի բացման նիստի ավարտի օրը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա Ընթացակարգում 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ՏՐԱԿ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.09.2019թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետի համաձայն.

«...ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «ՏՐԱԿ» ՍՊԸ-ն հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներում առկա է անհամապատասխանություն՝ հայտը ներկայացվելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է Ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և ծանուցել մասնակցին՝ ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակիցը չի շտկել անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովի կողմից «ՏՐԱԿ» ՍՊԸ-ի հայտը մերժվեց:...»

Այնուհետև, ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված 16.09.2019թ. թիվ ՊՆ/02/1861-2019 գրությամբ ներկայացրել է «ՏՐԱԿ» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 16.09.2019թ. թիվ ՊՆ/02/1861-2019 գրության հիման վրա, 26.09.2019թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանի վարույթում նախաձեռնել է թիվ ՍՅ-ԼՕ-2019/159 պաշտոնական ընթացակարգը՝ «ՏՐԱԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, որը ներկայումս գտնվում է քննության փուլում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև Օրենք) 6 րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4 րդ և 5րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հույտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին:

Այսպիսով, Կարգի 45-րդ կետը հստակ սահմանում է, որ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, եթե ի հայտ են գալիս Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը ե ձեռնարկատիրությանխթանումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում

1) Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

2) հանձնաժողովը գնահատում է նույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն ւսոառաջարկվող ապրանքի հրավեյտվ նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ պայմանով, որ առաջին տեղն

զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 47-րդ կետի համաձայն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ՏՐԱԿ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.09.2019թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետի համաձայն.

«...ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «ՏՐԱԿ» ՍՊԸ-ն հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներում առկա է անհամապատասխանություն՝ հայտը ներկայացվելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է Ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և ծանուցել մասնակցին՝ ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակիցը չի շտկել անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովի կողմից «ՏՐԱԿ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:...»

Այսպիսով, ինչպես արդեն նշվել է, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ գնումներին մասնակցելու իրավունք չունեն նաև այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նույն կետի 2-րդ պարբերությունը հստակ սահմանում է այն հիմքերը, որոնց առկայության դեպքում մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, դրանք են՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց, գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությ ունից:

Ընկերությունը հայտի թիվ 1 հավելվածով հայտնել և հավաստել է, որ բավարարում է գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին: Արդյունքում արձանագրվել է, որ «ՏՐԱԿ» ՍՊԸ-ի հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներում առկա է անհամապատասխանություն, ինչը սահմանված ժամկետում մասնակիցը չի շտկել և գնահատող հանձնաժողովի կողմից «ՏՐԱԿ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է շտկում չկատարելու հիմքով:

Այսպիսով, գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը «ՏՐԱԿ» ՍՊԸ-ի կողմից չշտկելը չի կարող դիտարկվել, որպես Օրենքի 6-րդ հողվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը, և այդ հիմքով մասնակիցը չի կարող ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Միևնույն ժամանակ արձանագրված անհամապատասխանությունը «ՏՐԱԿ» ՍՊԸ-ի կողմից չշտկելը չի կարող արձանագրել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որևէ հիմքի առկայություն, քանի որ մասնակիցը տվյալ դեպքում ի սկզբանե գնման գործընթացի շրջանակում չի ստանձնել որևէ պարտավորության, որը խախտվել է, կամ թույլ չի տվել պայմանագրով նախատեսված որևէ պարտավորության խախտում կամ չի հրաժարվել գնման գործընթացին հետագա մասնակցությունից, ինչպես նաև չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Այսինքն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը «ՏՐԱԿ» ՍՊԸ-ի կողմից չշտկելը, Ընկերության կարծիքով, Կարգի 48-րդ կետի ուժով հիմք է հայտը մերժելու, այլ ոչ թե մասնակցի տվյալները լիազոր մարմին ուղարկելու վերջինիս «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ում ներառելու նպատակով:

Կարգի 63-րդ կետի «ա» ենթակետի համաձայն մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3- րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

«ՏՐԱԿ» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ Ընկերությունը բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն «ՏՐԱԿ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից:

Համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի գնումներին մասնակցելու իրավունք չունեն նաև այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ

ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նույն կետի 2-րդ պարբերությունը հստակ սահմանում է այն հիմքերը, որոնց առկայության դեպքում մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, դրանք են՝

ա. խախտել է պա]մանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստեղծված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությ ունից:

«ՏՐԱԿ» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ բավարարում է մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, որը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունները ստուգելու նպատակով ՀՀ կա պետական եկամուտների կոմիտե համապատասխան հարցում է ներկայացվել: Արդյունքում արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված վերը նշված հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը, այլ կերպ ասած, առկա է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը, որի պարագայում Ընկերությունը չի կարող մասնակցել գնումների գործընթացին: Միևնույն ժամանակ համապատասխան հայտարարությունն իրականությանը չհամապատասխանող գնահատվելու դեպքում, Ընկերության կարծիքով, չի կարող արձանագրվել մասնակցի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որևէ հիմքի առկայություն, քանի որ մասնակիցը տվյալ դեպքում ի սկզբանե գնման գործընթացի շրջանակում չի ստանձնել որևէ պարտավորություն, որը խախտվել է, կամ թույլ չի տվել պայմանագրով նախատեսված որևէ պարտավորության խախտում, կամ չի հրաժարվել գնման գործընթացին հետագա մասնակցությունից, ինչպես նաև չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Այսինքն՝ «ՏՐԱԿ» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտարարություն, որը ստուգվել է սահմանված կարգով և որի՝ իրականությանը չհամապատասխանելու հանգամանքը, Ընկերության կարծիքով, հիմք է հայտը մերժելու, այլ ոչ թե Ցուցակում ներառելու համար.

Օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետը սահմանում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՏՐԱԿ» ՍՊԸ-ի հայաը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից, որի հետևանքով Ընկերության կողմից ներկայացված հայտարարությունը որակվել է որպես իրականությանը չհամապատասխանող, համաձայն Օրենքի վերը նշված հոդվածի, Ընկերության կարծիքով, չի հանդիսանում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը, փաստական հանգամանքները և «Տրակ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Մասնակիցը 18.02.2021թ.-ին ներկայացրած գրությամբ հավելել է հետևյալը.

««ՏՐԱԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/159 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

Ինչպես արդեն հայտել ենք՝ ՀՀ պաշտպանության նախարարության /այսուհետև նաև՝ Պատվիրատու/ կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/, որին 21.08.2019թ. մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՏՐԱԿ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.08.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ 27.08.2019թ.՝ հայտերի բացման նիստի ավարտի օրը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա Ընթացակարգում 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ՏՐԱԿ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.09.2019թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետի համաձայն.

«...ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «ՏՐԱԿ» ՍՊԸ-ն հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներում առկա է անհամապատասխանություն՝ հայտը ներկայաց-վելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է Ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և ծանուցել մասնակցին՝ ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակիցը չի շտկել անհամապատասխանությունը և գնահատող հանձնա-ժողովի կողմից «ՏՐԱԿ» ՍՊԸ-ի հայտը մերժվեց:...»

Այնուհետև, ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված 16.09.2019թ. թիվ ՊՆ/02/1861-2019 գրությամբ ներկայացրել է «ՏՐԱԿ» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 16.09.2019թ. թիվ ՊՆ/02/1861-2019 գրության հիման վրա, 26.09.2019թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանի վարույթում նախաձեռնել է թիվ ՍՅ-ԼՕ-2019/159 պաշտոնական ընթացակարգը՝ «ՏՐԱԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

11.10.2019թ. «ՏՐԱԿ» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան, որով Դատարանին խնդրել է՝ վերականգնել մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը, այն է՝ ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված 16.09.2019թ. թիվ ՊՆ/02/1861-2019 գրությամբ «ՏՐԱԿ» ՍՊԸ-ի տվյալները ներկայացնելու

վերաբերյալ կայացրած որոշումը՝ վերջինիս «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ում ներառելու նպատակով ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձի վարույթում ընթացակարգ նախաձեռնելու համար և որպես հետևանք՝ վերացնել «ՏՐԱԿ» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ում ներառելու նպատակով ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձի վարույթում նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/159 պաշտոնական ընթացակարգը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 07.07.2020թ. կայացրած վճռով՝ որոշվել է «ՏՐԱԿ» ՍՊԸ-ի կողմից ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու պահանջի վերաբերյալ ներկայացրած հայցը մերժել:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է թիվ ՍՑ-ԼՕ-2019/159 պաշտոնական ընթացակարգի քննության ընթացքում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը քննության առնի բացառապես «Տրակ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած վարքագիծը՝ կաշկանդված չլինելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացրած որոշմամբ:

4. <u>ՍՑ-ԼՕ-2019/159 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ավտոբեռնիչների ձեռքբերման նպատակով 12.08.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Տրակ» ՍՊԸ-ն:

ii. «Տրակ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից

ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

iii. Մասնակիցը թիվ 2 հավելվածով ներկայացրած գնային առաջարկով հայտնել է, որ ուսումնասիրել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, որի արդյունքում առաջարկել է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Անվավոր բարձիչներ /Ավտոբեռնիչներ/	16 464 000	3 292 800	19 756 800

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 22.08.2019թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտի օրը Հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա Ընթացակարգում 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Տրակ» ՍՊԸ-ն:

v. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ ՀՀ ՊԵԿ) կողմից 30.08.2019թ.-ին տրված տեղեկատվության համաձայն՝ «Տրակ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմել է 4 147 100 ՀՀ դրամ:

vi. Հանձնաժողովի 03.09.2019թ.-ի նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Տրակ» ՍՊԸ-ն հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներում առկա է անհամապատասխանություն՝ հայտը ներկայացվելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է Ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ (02.05.2019թ.-ի թիվ 516-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և ծանուցել մասնակցին՝ ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետում մասնակիցը չի շտկել անհամապատասխանությունը, ինչով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է «Տրակ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

viii. 04.02.2021թ.-ին Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) թիվ ԵԴ/33672/02/19 քաղաքացիական գործով՝ ըստ հայցի «Տրակ» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, երրորդ անձ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի՝ մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու պահանջի վերաբերյալ 07.07.2020թ.-ին կայացված վճռով (այսուհետ՝ Վճիռ) ներկայացված հայցը մերժվել է:

ix. Վճռի՝ Դատարանի պատճառաբանությունները և իրավական վերլուծությունները մասի համաձայն՝ այսպիսով, դատարանը հաստատված համարեց, որ առկա է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, այն է՝ «Տրակ» ՍՊԸ-ն խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, քանի որ 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցնելուց հետո, սահմանված ժամկետում չի ներկայացրել (չի շտկել) «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, հետևաբար դատարանը գտնում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 16.09.2019թ. թիվ ՊՆ/02/1861-2019 գրությամբ «Տրակ» ՍՊԸ-ի տվյալները ներկայացնելը՝ վերջինիս «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ում ներառելու նպատակով գնումների հետ կապված բողոքը քննող անձի վարույթում ընթացակարգ նախաձեռնելու համար, իրավաչափ է, բխում է վերը նշված հոդվածների պահանջներից, որպիսի հանգամանքն էլ հիմք է հայցապահանջը՝ մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու վերաբերյալ, մերժելու համար:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.09.2019թ.-ի թիվ 26/26-1/15856-2019 գրությամբ «Տրակ» ՍՊԸ-

ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը …

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

4) էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 63-րդ կետի համաձայն՝ Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնի հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

2) եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ գնման ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը՝ բացառությամբ մասնագիտական վերապատրաստման, աուդիտորական կամ խորհրդատվական ծառայությունների, շինարարական ծրագրերի՝ ներառյալ դրանց իրականացման համար

անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտներով կամ նորմատիվ-տեխնիկական պահանջներով սահմանված դեպքերի կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքի ձեռքբերումը կամ մասնակիցն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին,

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կարգի 32-րդ կետի 1-ին

ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Հայտը գնահատվում է բավարար, եթե ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Այն դեպքում, երբ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատաս-խանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապա-տասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ավտոբեռնիչների ձեռքբերման նպատակով 12.08.2019թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Տրակ» ՍՊԸ-ն թիվ 2 հավելվածով ներկայացրած գնային առաջարկով հայտնել է, որ ուսումնասիրել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, որի արդյունքում առաջարկել է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Անվավոր բարձիչներ /Ավտոբեռնիչներ/	16 464 000	3 292 800	19 756 800

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.08.2019թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտի օրը Հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա Ընթացակարգում 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Տրակ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից 30.08.2019թ.-ին տրված տեղեկատվությունը, արձանագրել է, որ Մասնակցի հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներում առկա է անհամապա-տասխանություն՝ հայտը ներկայացվելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է Ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից՝ «Տրակ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմել է 4 147 100 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հաշվառմամբ և հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և ծանուցել է մասնակցին՝ ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով, երեք աշխատանքային օրվա ընթացքում, շտկել անհամապատասխանությունը: Սակայն սահմանված ժամկետում մասնակիցը չի շտկել անհամապատասխանությունը, ինչով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է «Տրակ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ Մասնակիցը, ուսումնասիրելով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով ընթացակարգի հրավերը և հայտնելով, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, որպես պայմանագրի կատարման համար ընդհանուր գին ներկայացրել է 19 756 800 ՀՀ դրամ գումարի չափով գնային առաջարկ: Սակայն ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրված տեղեկատվության համաձայն՝ «Տրակ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու (2019թ.) տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմել է 4 147 100 ՀՀ դրամ, ինչը պակաս է վերջինիս կողմից 1-ին չափաբաժնով ներկայացված գնային առաջարկից: Մասնակցին տրվել է վերոնշյալ անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն, սակայն վերջինիս կողմից այն չի շտկվել:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Մասնակցի հայտը, գործել է իրավաչափ՝ հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի դրույթները, քանի որ «Տրակ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու (2019թ.) տարվան նախորդող երեք հաշվետու տարիների (2016թ.-2018թ.) համախառն եկամուտի հանրագումարը (4 147 100 ՀՀ դրամ) պակաս է վերջինիս կողմից 1-ին չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկից՝ 19 756 800 ՀՀ դրամ գումարից, իսկ Մասնակիցը, Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում չներկայացնելով հայտը ներկայացնելու (2019թ.) տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարի համապատասխանության վերաբերյալ լրացուցիչ փաստաթղթեր, տեղեկություններ, նյութեր կամ այլ ապացույցներ, չի բավարարել Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով և Կարգի 63-րդ կետով սահմանված պահանջներին (ֆինանսական միջոցներ), ուստի, տվյալ պարագայում, գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի

հայտը մերժելու մասին կայացված որոշումն բխում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Տրակ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված

ծածկագրով հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցը ներկայացնում է մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի համապատասխանության մասին հայտարարություն: Եվ եթե հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ ներկայացնելով որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի համապատասխանության մասին իրականությանը չհամապատասխանող հայտարարություն, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Տրակ» ՍՊԸ-ն, Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով համապատասխանության շտկումներ՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.09.2019թ.-ի թիվ 26/26-1/15856-2019 գրությամբ «Տրակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/159 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Տրակ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**